

## ԱՐԵՎԱՏԱԼԱՅ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ

Վ. Լ. ԱՃԵՄՅԱՆ

Աշխարհաբարի առաջին նմուշը, ըստ Այտրնյանի և Աճառյանի, Բջնիի 1358 թ. մի արձանագրություն է: Սակայն բուն արևմտահայ աշխարհաբարի կնիքը առաջին անգամ զգացվում է Ամիրգովլաթ Ամասիացու «Անդիտաց անպէտում»՝ գրված 1478 թ.: XVI և XVII դարերում արևմտահայ աշխարհաբարով գրությունները խառնուրդ վիճակ են ներկայացնում: Բարսեղ Վարազեցու 1591 թվականի հիշատակարանը գրված է վանի բարբառով՝ գրաբարի և միջին հայերենի տարրերով<sup>1</sup>: 1675 թվականին Ամասիոյում լույս տեսած «Արճեստ համարողութեան»<sup>2</sup>, 1684 թվականին ավարտված Երեմիա Չելեպի Քյոմյուրնջյանի «Ստամբուլյ պատմութիւնը» և 1687 թվականին Վենետիկում հրատարակված «Պարզաբանութիւն հոգեևուագ Սաղմոսաց» զրբերը գրաբարի և արևմտահայ աշխարհաբարի խառնուրդ են թուրքերեն որոշ բառերով: Վերջինում առկա են նաև արևելյան աշխարհաբարի որոշ հատկանիշներ:

XVIII դարում արևմտահայ աշխարհաբարը բավական ընդհանրանում է որպես գրավոր լեզու: Նրա մշակման գործում մեծ դեր են խաղում Երկու խոշոր կենտրոններ՝ Պոլիսն ու Վենետիկը:

Հայերը Պոլսում բնակություն են հաստատել բյուզանդական կայսրության առաջին օրերից սկսած: ԺԴ դարի կեսերին նրանց թիվն այնքան շատ էր, որ ունեին եպիսկոպոս ու եկեղեցի՝ 1453 թ. Պոլսի գրավումից հետո Սուլթան Ֆաթիհը զանազան վայրերից հայեր գաղթեցրեց Պոլիս, նրանց համար ստեղծվեց և մի կրոնական կենտրոն՝ Պատրիարքությունը: Պոլսում համախմբվեցին Հայաստանի տարբեր նահանգներից եկած հայեր: Թուրքալի մայրաքաղաքը նրանց գրավում էր առևտրի համար իր նպաստավոր տեղագրությամբ: Շատ հայեր կարողացան այնտեղ լավ դիրք ստեղծել իրենց համար և հարստանալ աշխատելով պետական պաշտոնատներում, բժշկություն, փաստաբանություն և այլ ասպարեզներում: Ավելի մեծ էր քայքայվող գավառներից դեպի Պոլիս ձգտող արճեստավորների, մանր առևտրականների և սևագործ մշակների թիվը: Սուլթանական կառավարության բազմաբանությունը, իհարկե, հայերի շահը նկատի չուներ, այլ նպատակ ուներ հայերին օգտագործել օսմանյան մայրաքաղաքը ծաղկեցնելու համար:

Այսպիսով, պատմական պարագաների բերումով արևմտահայերի քաղաքական և տնտեսական կյանքի գլխավոր կենտրոնավայրը եղավ ոչ թե Հայաստանի քաղաքներից մեկը, այլ Պոլիսը, որ նույն այդ պատճառով դարձավ նրանց նաև մշակութային կյանքի առանցքը: Օտար միջավայրում ազգային ինքնագիտակցությունը վառ պահելու ձգտումը խթան հանդիսացավ պոլսահայերի ազգային մշակույթի դարգացմանը, մինչդեռ գավառները հեռու մնացին այդ շարժումից: Այդ ձեռնտու էր սուլթանական իշխանությունը, քանի որ գավառներում հայերը բարեկեցիկ վիճակում չէին ապրում, Դանիել Վարուժանի խոսքերով՝ «գավառացին և թե գրեր. ցավեր ուներ պատմելու»<sup>3</sup>: Այդ էր պատճառը, որ կառավարությունը պահանջարկ ուներ խրախուսում էր Պոլսում, ուր հսկողությունը ավելի անմիջական կլիներ և հայերի որոշ մասը տնտեսապես համեմատաբար ավելի լավ գրություն մեջ էր:

<sup>1</sup> «Դիւան Հայոց պատմ.», խմբ. Գիւտ քհ. Աղանեանց, Թիֆլիս, 1912, հատ. Ժ:

<sup>2</sup> Հոգևանեսու Գաղանճյան. Գրավոր հայերենը վերջին դարուս մեջ, «Առեգելք», 1898, № 4098:

<sup>3</sup> Լ. Տաշյան, Յուզակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց, Վիեննա, 1895, էջ 782:

<sup>4</sup> «Աղատամարա», 1911, էջ 705:

XVIII դարի սկզբում դրականության լեզուն հիմնականում լատինարան գրաբարն էր. հրատարակվում էին առավելապես կրոնական բնույթի աշխատություններ, սակայն այն գործերը, որոնք պետք է ժողովրդին մատչելի լինեին, գրվում էին աշխարհաբարով:

Այսպես, Ավետիք Եվզովիացի պատրիարքի ինքնակենսագրությունը, գրված 1709 թ. և գտնված Ֆրանսիայի արտաքին դործերի դիվանում եղուարդ Դյուլորիև ֆրանսիացի հայագետի կողմից, այդ ժամանակի արևմտահայ աշխարհաբարով է: Տալիս Ենք մի հատված այդ աշխատությունից.

«Սահայայ Եար Երեմիայն և Թիվելիզիի Ովաննէս և Յարութիւն և Լսբեր օղլի Նիկողոսն. այս Դ մարդիկ թլմէսիւն ևն գրնր, և իւրեանց կնքովն կրնթեալ ուղարկեցին Վէջիդին թէ այսչափ դրամ տանք թուրքին մեծաւորին թող ղԱւետիք վարդապետն հանէ ի պատրիարքութենէ և մեղ շնորհեսցլ ըզմանսուպ պատրիարքութեան»<sup>1</sup>:

Այս կենսագրությունը գրաբարի և այն ժամանակվա պոլսահայ աշխարհաբարի խառնուրդ է՝ թուրքերենից փոխառչալ (թուրքերեն ասելով. հոգվածում նկատի ունենք օսմանցիների լեզուն, որ զուտ թուրքերենի, արաբերենի և պարսկերենի խառնուրդ է) բազմաթիվ բառերով, ինչպես՝ մուպաշիր, ֆեթվա, ռահիպ, թլմէսիւն, թերծիման, ղալըմ, արղուհալ, հիսապ, ղայմախամ. պարապար և այլն: Հանդիպում են բիշ թվով ֆրանսերեն բառեր ևս, երբեմն աղավաղված արտասանությամբ, ինչպես՝ փէոփսիէօն (pere prier), ֆրանցե (Français):

Հատկանշական է, որ այդ ժամանակ դեռ «կու» մասնիկը վերածված չէ «կը»-ի: Առաջին անգամ XVIII դարի կեսերին է, որ «կու»-ի կողքին սկսում է գործածվել նաև «կը» մասնիկը բաղաձայնով սկսվող բայերից առաջ. այսպես, 1758 թվականին Հակոբ Նայլյան Ձմեռացիին

գրում է, «գորթն թև պուտամիշ շանես Լասյանի կու լինի գնալով: Նմանպ և յորթոյ սրտիդ աւելորդ ճիւղը կը բուսանին դանսոգան տեսակը մեղաց»<sup>2</sup>: 1760 թվականին տպված Պաղտատար Գպիրի Քերականության մեջ ևս երկու մասնիկներն էլ հավասարապես օգտագործված են: «Կու»-ի օգտագործումը «կը»-ի հետ միաժամանակ շարունակվում է մինչև XIX դարի սկիզբը, երբ «կու»-ն վերջնականապես տեղը զիջում է «կը» մասնիկին, պահպանվելով միայն գալ, լալ. տալ բայերի խոնարհման մեջ:

Ավետիք Եվզովիացու աշխարհաբարին նման է նրա հաջորդ Գալուստ Կալծակ Ամասիացի պատրիարքի լեզուն, որ գրաբարի, աշխարհաբարի և թուրքերենի խառնուրդ է: Տալիս Ենք մի հատված այս վերջինի «Գիրք որ անուանեալ կոչի Լուսաշաիգ»-ից, տպված Պոլսում 1704 թ.:

Վասն գինոյ.

«Յորժամ տասն թաս ըմպլ. զձեռն և զոտն տա առնէ. կանգնել ոտից ոչ կարլ. ոպ անդամալոյծ է: Յորժամ ժա ըմպլ բարձերուն վը փսխլ. ղահլլ բերլք որ ըմպլ. սեղանի տըր թէզ սրբէ: Յորժամ ժը ըմպե. զբերանն կարկամլ. իշմարով խօսի ասլ. մկան խօզու ձայն հանլ: Յորժամ ժղ ըմպէ, ձրերէն սիւնն կապլ. պառաններն ուրախ առնէ. եկէք տեսէք թիւն խենթ կոճ»:

1715 թվականից հետո արևմտահայերի մոտ կրթական գործը մեծ թափ է ստանում: Պոլսի Սկյուտարում հիմնվում է առաջին հայ դպրանոցը և հրատարակվում են մեր հին մատենագիրների շատ աշխատություններ: 1701 թ. Բերայի Կապուցիյանների վերնատանը Մխիթար Սևրաստացին կազմակերպել էր իր միաբանությունը, որ կրոնական և քաղաքական պատճառներով 1717 թ. վերջնականապես փոխադրվում է Ս. Ղազար կղզին: Մխիթար Սևրաստացին ձեռնարկում է հրատարակչական աշխատանքի: Սկզբում հրատարակում է մեծ մասամբ թարգմանական գործեր՝ կրոնական բնույթի և գրաբար լեզվով: Նրա նպատակն էր գրաբարը մոտեցնել իր հին մաքուր վիճակին: Սակայն արդեն 1725 թ. նա զգում է ժողովրդին մատչելի լեզվով, այսինքն աշխարհաբարով գրելու անհրաժեշտությունը: Այդ թվին հրատարակված գրաբար Սյրբենարանի և Քրիստոնեականի առաջաբանում կարողում ենք.

«Ձի ուսումն սորին մանաւանդ մանկանց և գոհհկաց առաջադրի, որոց ևթէ ըստ ամենայնի ոճին աշխարհօրն լեզուի շարադրեցեալ առաջագրիցիւր լաւագունեղ ևս էր, բայց այժմօյս ոչ այնպէս արարաք սակս ոմանց նկատմանց»<sup>3</sup>:

Շուտով Մխիթարի տատանումները վերջ էին գտնելու:

<sup>1</sup> «Մասիս», 1874, № 1403:

<sup>2</sup> «Գիրք կոչեցեալ Գանձարան ծանուցմանց», Կ. Պոլիս. 1758, էջ 44:

<sup>3</sup> «Գիրք որ անուանեալ կոչի Լուսաշաիգ», Կ. Պոլիս, 1704, էջ 200:

<sup>4</sup> «Հանդես ամսօրյա», 1910, էջ 431:

Արևմտահայերի մտավոր կյանքում կարևոր է 1726 թվականը: Այդ տարի է Մխիթար Սեբաստացին գրում արևմտահայ աշխարհաբարի առաջին քերականությունը, որ անտիպ է մնացել և որի մի համառոտությունը տպագրվել է 1727 թ. տաճկերեն բացատրությամբ՝ «Դուռն քերականության աշխարհաբար լեզուին հայոց շարագրեցեալ տաճկականա լեզուա»: Աշխարհաբարն արդեն այնքան ընդհանրացած էր, որ ժողովուրդը պահանջ էր գգում այդպիսի մի դասագրքի:

«Բազմիցս մեծաւ աղաշանօք խնդրեցաւ յոմանց բարեպաշտից, զի շարագրիցեմ զհոլովից անուանց, և զլծորդութեանց բայից, և զորպիսութեանց այլոց մասանց քերականութեան, այնպիսեալ աշխարհաբարոի ոճիւ ըստ որում խօսին այնոքիկ Հայք, որք բնակեալք են ի Փոքրն Ասիա այսինքն ի բոլոր Հոռմանց տուն և ի Փոքր Հայաստուն»,— գրում է Մխիթար Սեբաստացին: «Եվ ես ոչ ոնելով զժամանակ արարի զվազարկութիւն զամս բազումս և վերջապէս ստիպեալ ի թախանձանաց՝ ձեռն արկի ըստ դոյնոյ կարի իմոյ վերագտանել զբնաւորեցեալս, կանոնաւորմունս, զհոլովմանդ անուանց և զլծորդութեանց բայից աշխարհաբարոի լեզուին մերոյ»<sup>1</sup>:

Ինչ պատկեր է ներկայացնում Մխիթար Սեբաստացու ուսուցանած աշխարհաբարը: Դրա հիմնական գծերը հետևյալներն են. խոնարհման մեջ ներկայի և անկատարի համար օգտագործված է «կու» մասնիկը, որ գրվում է «կ» ձայնավորներից առաջ (կասեմ, կերթամ և այլն): Կատարյալի հոգնակի առաջին դեմքի վերջավորությունն է ան՛լ, անցյալ անկատարինը՝ էան՛ի (թողանք, թողիք, թողին—կու թողանք, կու թողէիք, կու թողէին): Ապառնին ունի հետևյալ տեսքը. լուամ, լուաս, լուայ. կան հարակատար և զերակատար ժամանակներ (լուացեր եմ. լուացեր էի), իսկ զերբայները ըստ նրա երկուսն են (լուալով լուայնինի):

Սեբաստացին ընդունում է երեք հոլովում.

ա) ի հոլովում (հացի, մանգաղի):

բ) ու հոլովում (հաւու, ցրտու). այս հոլովումներին ենթարկվող բառերի հոգնակի ուղղականը ունենում է երեք վերջավորությունը, եթե բառը միավանկ է և նև. եթե երկվանկ կամ բազմավանկ է:

գ) ան հոլովում (դռան). հոգնակին միշտ նև է ընդունում:

Կան նաև զարտուղի հոլովումներ, ինչպես օրինակ.

տէր, տիրոջ—տիրուրտիք

հայր, հօր—հարեր

օր, աւուր—օրեր

տիրուհի, տիրուհէ—հոգնակի շունի

Կիրակոսներ, Կիրակոսենց.

Դերանուններն են՝ ևս, դու, ան, մենք, դուք, անոնք, սա, սրվոնք, սրվի. տվոնք, նա նվոնք, սա, ասոնք, ատ, ատոնք. ինքն. իրենք, մերոնք, ձերոնք, ով, որ, որոնք, ինչ, մէկմի, մէկքանի, ամէնն:

Այս աշխատությունը ուշագրավ է որպես այն ժամանակվա ամենալավ աշխարհաբարի համար կանոններ սահմանելու առաջին փորձ:

Նույն 1727 թ. Մխիթար Սեբաստացին լույս է ընծայում իր «Գիրք Քրիստոնէականի վարդապետութեան շարագրեցեալ աշխարհաբարոի լեզուա»-ը, որի «Բան աւ ընթերցողս» ներածականում ասում է.

«Ի բազմաց հետէ ըզձայի զքրիստոնէականէ վարդապետութենէ զոմանս հարկաւորս ուսանելիս՝ աշխարհաբարոի լեզուաւ շարագրել, առ ի յօգուտ այնց որք ոչ ունին զբաւական կարողութիւն առ հասկացումն զբարառի շարագրութեան. բայց միշտ կասկածէի թէ զուցէ եպերիցի յոմանց, մինչ բազումք իցեն յազդի մերում Աղքատք յիմաստից և բազմապարծք զգիտութեանց: Վասն որոյ մինչ հանդերձ այլքեանարանին շարագրեցի զմիւս Քրիստոնէական վարդապետութիւնն որ տպեցաւ յամի տեառն 1725, սակա վերոյ ասացելոց կասկածանաց՝ զբարառի լեզուաւ արտագրեցի, և իմս վաղեմենի բաղձան մնաց անկատար: Բայց յայսմիկ ամի, մինչ նաև զքերականութենէ աշխարհաբարոի լեզուին մերոյ ընձեռեցի և զառաջին մասն նորին՝ նաև տպագրութեամբ ի լոյս ամի, ի բաց ձգելով վկասկածանս եպերանաց ձեռնարկի շարագրել աշխարհաբարոի լեզուաւ զայս համառօտ քրիստոնէական վարդապետութիւնս. որով թէ և մի միայն գոհեցիկ ոք օգտիցի և ուսանիցի զհարկաւոր մասունս հաւատոյ իւրոյ, տակաւին

<sup>1</sup> Մխիթար Սեբաստացի, Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց շարագրեցեալ տաճկականա լեզուաւ, Վենետիկ, 1727, էջ 3:

արժան էր աշխատիլ ինձ առ այս: Վասն որոյ որք ոչ ախորժին առ այս՝ ունին և զգրաբառն՝ վարժեսցին ի նմին. և որոյ դժուարին է այն՝ վարժեսցին սովորք: Բայց ընթերցողն պարտի ջանալ, զի կէտ առ կէտ և բոտ օրինի ընթերցողու աշխնքն այնպէս և այնու եղանակաւ ըստ որում կերպի խօսի ընդ ընկերին ի գրուցատուութեան: Քանզի վասն անտէրունչ գոլոյն ազգին մերոյ ոչ է այնքան ի գործածեցեալ աշխարհաբառ լեզուն մեր ի գրուածս և այսու եղեալ է որպէս զանսովոր իր ինչ... Արդ՝ մեծագունեղ օգտակարութիւն աշխարհաբառի լեզուի մերոյ յոյժ դիւրաւ երևիլ կարէ ի գրուածս, եթէ ընթերցողքն բարեպէս՝ ջանայցեն վարժել զինքեանս ի ընթերցումս և ի կրելն յսկզբան զգոտարութիւն ընթերցողոյ, ոչ բարկանայցեն. և այնու ի կսկծանաց սրտին ի յեպերել ժպրհիցին»<sup>1</sup>:

Այս տողերը մի անգամ ես ցույց են աւելիս, որ Մխիթար Սեբաստացին գիտակցում էր աշխարհաբարի կարևորութիւնը և մտահոգված էր նրա տարածմամբ: Քրիստոնեականից քաղված հետևյալ հատվածը կարող է գաղափար տալ նրա աշխարհաբարի մասին.

«Երբ որ խաչ կու հանեմ յերեսս՝ յառաջ զուշիկ ձեռքս ճակտիս վերայ կու դնեմ, և կասեմ Յանուն Հօր, և անկից վար բերելով՝ զձեռքս դուրսս վերայ կու դնեմ, և կասեմ որդւոյ, և անկից զձեռքս դեպ ի ձախիկ կուշտս կու տանիմ և կու բերեմ դեպ ի յաջիկ կուշտս, և կասեմ որդւոյն սրբոյ»<sup>2</sup>:

Մխիթարից հետո աշխարհաբար գրքերի հրատարակումը շարունակվում է և՛ Պոլսում, և՛ Վենետիկում: 1741 թ. Պոլսի Հովհաննես Կոլոտ պատրիարքին հաջորդում է Հակոբ Նալլան Զմմարացին, որ հրատարակում է բազմաթիվ կրոնական գրքեր, մի մասը մաքուր գրաբար լեզվով. իսկ մի քանիսն էլ ժողովրդի համար՝ գրաբարախառն աշխարհաբարով, թուրքերենից փոխառյալ բառերով ու ձևերով լի:

Ահա մի նմուշ Հակոբ Նալլան Զմմարացու «Զէն հոգևոր» գրքից:

«Թէ հարցանեն. դուք քրիստոնեայք կասէք քի՛ այն այլ քելամուլլահն մարմնացաւ ի մարիամայ պիբիր աղջկնէն, ի՛նչ իխթիգա ունէր մարմնանալն: Ասա թէ, ես ի՛նչ իթիգա ունի՛ որ դու զֆիբր արած բանդ կու գրես թղթի վր: Պիտիբ ասէ թէ, ֆիբրս պէյան լինալու համար: Տէիմտի և ած կամեցաւ որ զիրէն քելամն մէզի պէյան անէ. որ յայն քելամէն մեք իմանայք զայ ֆիբրն վէ տէրեա միսիլի զիրէն քելամն. որ անոր սէպկալովն իմանայք զայ ուստէթն ի ձեռն այն քելամին»<sup>3</sup>:

XVIII դարի կեսերին արևմտահայ աշխարհաբարը արդեն այնքան էր ժողովրդականացել, որ հասարակ ժողովրդի համար սկսում էր դառնալ գրավոր հաղորդակցման միջոց: Պաղտասար Կարբը՝ XVIII դարի պոլսահայերի նշանավոր քերական-հայագետը, որ միաժամանակ եղել է մանկավարժ, բանաստեղծ, երաժիշտ, հրատարակիչ, 1752 թ. լույս է բնծայում արևմտահայ լեզվի պատմութեան համար շատ արժեքավոր իր «Բարեագիրքը»: Այստեղ գետեղված են հասարակ ժողովրդի համար գրված նամակաձևեր և պայմանագրեր, որոնց լեզվի հիմքը այն ժամանակվա Պոլսի աշխարհաբարն է: Բերենք մի նմուշ նամակաձևերից.

«...Ու թէ գու զմեզ կու հարցրնես իմ աննրման որդի. այ գոհութիւն. ամէնքս ողջ ե առողջ ենք. և քու քաղցրիկ երեսիտ հասրաթ ու կարօտ ենք: Վեց ոսկի եկաւ մեզ հասաւ. ած քու բանիդ գործիդ յաջողութիւն տայ: Գրիկըտ պակաս շքնես որ առնենք մեր աչքին քրսենք: Եւ ողջ կեցիր իմ անուշիկ որդի ալիքսան ամէն»<sup>4</sup>:

Նամակաձևերի աշխարհաբարի մեջ խառն են գրաբարյան ձևեր, ինչպես՝ դիմօք, աչօք, ի մէջ եկեղեցւոյ, կարի, ի հեռուստ, ի յոյժ մօտոյ, ողջ լեր, ծանիր, հասուսցէ. կան նաև թուրքերենից փոխառյալ բառեր՝ էհմալ, խապար, դայրէթ, անճախ, ամանաթ, նէնէ, մուզայթ և այլն:

Ուշագրավ է, որ որոշ հատվածներ նույնանում են արդի դրական աշխարհաբարի հետ, յրինակ՝ «Ինձի համար աստուած ձեզի շատ օրեր տայ, որ ձեր շուքը ձեր տանը վրայէն չի պակսի»<sup>5</sup>:

<sup>1</sup> Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կյանքի, Վենետիկ, 1909—1912, էջ 2006:  
<sup>2</sup> Բարսեղ Սարգսյան, Երկհարյուրամյա դրականական գործունեութիւն Վենետիկ Մխիթարյան միաբանութեան, Վենետիկ, 1905, էջ 129:  
<sup>3</sup> Քիբր կոչեցեալ Զէն հոգևոր», Կ. Պոլիս, 1757, էջ 18:  
<sup>4</sup> «Բարեագիրք», Կ. Պոլիս, 1752, էջ 84—85:  
<sup>5</sup> Նույն տեղում, էջ 75:

Ահա և մի ուրիշ նմուշ պայմանագրերից.

«Պատճառ ձեռագրոյս այս է, որ ես Սիմաւոնի որդի Ղազէզ Մելիտոնս, հետ տիրացու Աբրահամին օրթախ եղայ, Ռ դուռուշ ես դրի սէրմայէ, ՌԳՃ դուռուշ տիրացու Աբրահամն, որ խանութիս կէտիկն այլ իմ է: Այս ղավուվս, որ երբ հասնինք աստուծով ի տարեգլուխն և հիսապ ընենք, աստուած ինչ շահ տված որ լինի, կէսն իմ լինի՝ կէսն նորա: Ու թէ աստուած չընէ՝ զարար ալ ընենք նէ, նոյնպէս կէսն ես քաշեմ, կէսն նա: Ու թէ, ով գիտէ գատվելու թէ լինինք, թէ ըողակ, թէ ըստակ, թէ պարտք, թէ վերէսիյէ. Երկուքիս հաւասար լինի»<sup>1</sup>:

Պաղտասար Դպիրը հմուտ գրաբարագետ էր: Նա անհրաժեշտ էր գտնում գրաբարի ուսուցումը գպրոցներում և ինքն էլ դասավանդում էր այն: Այդ նպատակով 1736 թ. գրել է իր երկհատոր պարզաբանված քերականութեան ձեռնարկը՝ «բացկեկ շարագրութենով որ փէր ղօլայ կու հասկացուի»<sup>2</sup>: Սակայն փորձված մտնկավարժը նկատում է, որ «անճախ ինչ ղատոր բաց շարագրութիւն ինի նէ, կէնէ շինքի գրոց շարագրութիւն է փոքր տղայքն կամ այլք, որ տահ գրոց լեզուն շեն գիտեր դիժարկեկ կու հասկանան»<sup>3</sup>: Ահա ինչու 1760 թ. նա հրատարակում է գրաբարի մի քերականութիւն «աշխարհի բառով», որ սովորողները դժվարութիւն չկրեն:

Ավելի ուշ, 1768 թ. Պաղտասար Դպիրը հրատարակում է աշխարհիկ լեզվով տաղեր՝ «Տաղարանիկ սիրոյ և կարօտանաց և այլ»: Այս տաղերում նա խուսափում է թուրքերեն շատ բաներ օգտագործելուց, որ նկատելի էր նրա քերականութեան մեջ: Ըստ երևույթին նա հարմար չի դատել բանաստեղծութեան մեջ օգտագործել Պոլսի աշխարհաբարր ինչպես որ կար, այլ հղկել է այն, զգալի տեղ տալով գրաբարյան ձևերին:

«Զիս քո սիրոյն ով նագելի հովերն առեր կու մաղէ. օտարին լեզուն աւելի ցավ եղեր զիս կու տաղէ, կու տաղէ. այս կարօտուս չի գիմացվիր միշտ բզճոգիս կու բաղէ—գէպ ի յերկիրն իմ սիրելոյն առնէր տանէր հովրն զիս, հովրն զիս. դեպ ի յայդին իմ նագելոյն փըշէր տանէր քամին զիս, քամին զիս»<sup>4</sup>:

1769 թ. Միխիթար Սեբաստացու 3 աշակերտների կողմից լույս են ընծայվում կրկին բազմաթիւ գրաբարից աշխարհաբար և աշխարհաբարից գրաբար, որոնց մեջ նախապատմութիւնը տրվում է Պոլսի հայերենին: Այդ պատճառով այս գրքերը պարունակում են բավական շատ թուրքերեն բառեր ու դարձվածքներ, ինչպես՝ աթ մէյտանըն վազել = արշաւել ի ձիրնթացս. ազտորմիշ ընել — սաստկացուցանել. գազան պէսլէմիշ ընօղ = գազանասնոյց. ամայ զէրէ = բայց բանգի:

Կարելի է ասել, որ XVIII դարից արդեն գծագրվում է արևմտահայ աշխարհաբարի զարգացման ասպագա ուղին: Վերը ասվեց, թէ ինչպես պատմական պարագաների բերումով Պոլսը դարձավ արևմտահայերի բաղաբան և մտավոր կյանքի կենտրոնը: Դա անկասկած պետք է նպաստեր այն բանին, որ Պոլսի բարբառը գերակշռութիւն ձեռք բերեր մյուս բարբառների վրա: Դրա համար կար մի ուրիշ նպաստավոր հանգամանք ևս: Փոքր Ասիայի շատ գավառների, ինչպես՝ Սեբաստիայի, Խարբերդի, Էրզրումի, Ամասիայի, Եվդոկիայի հայերենը մեծ տարբերութիւն չունէր Պոլսի հայերենից, ուստի և այդ գավառացիները դժվարութիւն չէին կրում պոլսահայ բարբառը հասկանալու: Ահա ինչ է գրում այդ մասին Խաչատուր Սյուրմելլիսը իր «Համառօտ թուարանութիւն աշխարհաբառ» գրքի առաջաբանում 1788 թվականին:

«Թէպէտ մեր ազգին մէջ տպած գրաբառ թուարանութիւն մը ելաւ, որ երկար ու տեղն ի տեղը թուարանական արհեստին վրայ լաւապէս գրած է, բայց գրաբառ ըլլալով, բազումք շեն կրնար խօլայ ու շիտակ հասկընալ: Անոր համար շատ մարդիկ կը բաղձային որ աշխարհաբառ լեզուաւ մէկ համառօտ թուարանութիւն մը ըլլայ, որ ավելի խօլայ հասկընան թէ սորվօղները և թէ սորվեցնօղները, և մենք ալ տեսնելով, թէ հարկաւոր է աս թուարանական ուսումը, պատշաճ տեսանք մէկ համառօտ թուարանութիւն մը շինել աշխարհաբառ լեզուաւ, որպէս զի ասոր վրայ վարժելով, մէկ դուռ մը կըլլայ աս նաև գրաբառ թուարանութեանը, որ խօլայ ու շիտակ հասկըցուի:

<sup>1</sup> «Բարեկարգ», էջ 107—108:

<sup>2</sup> Պաղտասար Դպիր, Գիրք քերականութեան, Կ. Պոլիս, 1760, էջ 2:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Պաղտասար Դպիր, Տաղարանիկ սիրոյ և կարօտանաց և այլ, Կ. Պոլիս, 1768.

Նւ թէպէտ դժուար էր աշխարհարառ լեզուաւ այսպիսի նիւթոց վրայ խօսիլ, մանաւանդ որ մեր ազգին մէջ ալ շատ տարբեր ու զանազան աշխարհարառ կերպ կայ խօսելոյ և գրեթէ ամմէն քաղաք կամ ամմէն գաւառ մէկզմէկէ տարբեր կր խօսին, բայց մենք միջակ կերպով ջանացինք գրել, որ բազումք խօսլայ կարենան հասկընալ: Եւ տեղիս տեղիս նաև տաճկի բառեր բանեցուցինք, որ գրեթէ ամմէնուն հասկանալի է» (էջ 3):

«Միջակ կերպով գրելու» և բոլոր գավառացիներից հեշտութեամբ հասկացվելու նպատակով Խաչատուր Սյուրմելյանը իր գրքի համար հիմք է վերցնում Պոլսի բարբառը:

1791 թ. Ղուկաս Ինճիճյանը լույս է ընծայում մի ուրիշ աշխարհաբար դասագիրք՝ «Տևսութիւն համառօտ հին և նոր աշխարհագրութեան»:

Բերում ենք մի հատված այդ գրքից.

#### Մէջօրեայ

Մէկ մեծ շրջանակ մըն է. մէկ բևեռէ մեկալ բևեռ կանցնի ամմէն տեղի վրայէն, ինչդտար տեղ որ մարդ կրնայ մտածել. և երկու կէս կր բաժնէ աշխարհս. մէկ կէսը կըսվի Կիսագունտ արևելեան. մէկալ կէսը կըսվի Կիսագունտ արևմտեան: Մէջօրեայ կըսվի աս շրջանակս ըստ որում արևը հոն հասնելուն պէս, օհարսակ կըլլայ հոն. ան տեղերը որ մէկ գծի վրայ են ՚ի հիւսիսոյ ՚ի հարաւ, մէկ մէջօրեայ ունին. և մէկ ատենի մէջ կըլլայ իրենց օհարսակ. բայց ան տեղերը՝ որ մէկզմէկու նայելով քիչ մը արևելք կամ արևմուտք կըլինան, ինչդտար մօտիկ ըլլան, ուրիշ ուրիշ մէջօրեայ ունին (էջ Ը—Թ):

Այս գիրքը համեմատաբար մաքուր արևմտահայ աշխարհաբարով է. դեռևս կան զրաբարյան տարրեր, ինչպես ի հիւսիսոյ, յարևելից, ի հարաւոյ, կայսերք, կղզիք, իշխանք, սակայն նրանք շեն գերակշռում. թուրքերեն արտահայտությունները նույնպես քիչ են և մեծ մասամբ օգտագործված են հեղինակի միտքը պարզաբանելու նպատակով, օրինակ.

Կեղոն կըսվի աշխրբիս մէջ տեղը, այսինքն օրթան (էջ Է):

Հասարակածին դին ուռած է, խնձորի կամ ոսպան ձևով, այսինքն մէրճիմէկի ձևով (էջ Զ):

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ XVIII դարում արևմտահայ աշխարհաբարը արդեն սկսել էր կարևորություն ստանալ որպես գրավոր լեզու. նրա այդ տարածումը, ավելի մեծ չափեր ընդունելով հետագայում, նախադրյալներ ստեղծեց XIX դարի կեսերին բորբոքված գրապայքարի համար, որ ավարտվեց աշխարհաբարի վերջնական հաղթանակով: XVIII դարում, հատկապես Մխիթարյանների ջանքերով «փոշիների տակից հանվեց նախնայաց մատենագրությունը», մաքրվեց և վերստին ուսումնասիրվեց գրաբարը, որով ստեղծագործվեցին շատ գրքեր: Բայց հաղորդակցության միջոց դարձել էր աշխարհաբարը, և Մխիթար Սեբաստացին ինքը առաջինը անհրաժեշտություն զգաց արևմտահայ աշխարհաբարի քերականություն հորինելու և այդ աշխարհաբարով դասագիրք պատրաստելու նրանց համար, որոնք «ոչ ունին գրական կարողություն առ հասկացումն դրաբառի շարադրութեան»: Մխիթարից հետո այլ հմուտ գրաբարագետներ, ինչպես՝ Պաղտասար Դպիրը, Խաչատուր Սյուրմելյանը, Ղուկաս Ինճիճյանը գիտակցում են, որ գրաբարը այլևս դժվար հասկանալի լեզու է ժողովրդի համար և ավելի նպատակահարմար է դասագրքերը շարադրել աշխարհաբարով:

### ЗАПАДНОАРМЯНСКИЙ АШХАРАБАР В XVIII ВЕКЕ

В. Л. АДЖЕМЯН

(Р е з ю м е)

В статье вкратце анализируется состояние западноармянского ашхарабара (ново-армянского языка) в XVIII в., показывается его распространение и начало стабилизации на основе константинопольского диалекта. Малодоступность грабара (древнеармянского языка) явилась причиной того, что такие крупные знатоки грабара XVIII в., как Мхитар Себасти, Пагдасар Дпир, Хачатур Сюрмелян, Гукас Инчичян в своих трудах, написанных для народа, использовали западноармянский ашхарабар. Популяризация этого, еще неправильного и необработанного, ашхарабара за счет грабара создала предпосылки для борьбы за ашхарабар в середине XIX в., что и кончилось победой ашхарабара.